Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՍԵՐԵՖ
62 ✓

1-50

II 6/20

Մատենադարան
Ս. Երեմիայի Մայր Տաճարի
Էջմիածին

№ 2/XII

2000

Գրք 13 Հատոր

Մերեք
62

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ

ԸՍՏ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ
ՀԱՆԳՈՒՅՑԵԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
Տ. ԵՍԱՅԵԱՅ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ
Տ. ՆԵՐՍԷՍԻ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ



Պետական Գրադարան
Սերբերանական
Գանձարան

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ
ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

1884

ՌՅԼԳ—1333

Օրէնք արկանել՝ սպաս Եկեղեցւոյ. Յորժամ կամիցի Քահանայն Պատարագ մատուցանել։

Պարտի այսպէս խորհրդաբար զգեստաւորիլ։

Մոցէ յաւանդատունն հանդերձ Սարկաւագքն ուր զգեստքն են Պատարագի։

Եւ զգեցեալ պաշտօնեային ըստ իւրաքանչիւր աստիճանի։

Աստացեն ապա. Աղմոս, ՃԼԱ. կ՚ասէ։

ՔԱՀԱՆԱՅՔ ՔՈ զգեցցին զարդարութիւն. և սուրբք քո ցնծալով ցնծասցեն։ Փխ.

Յիշեա՛ Տէր զԴաւիթ և զամենայն հեզութիւն նորա։

Որպէս երդուաւ Տեառնն. եւ ուխտս եդ Աստուծոյ Յակովբայ։

Թէ ո՛չ մտից ՝ի յարկս տան իմոյ. թէ ելից յանկողինս մահճաց իմոց։

Թէ տաց քուն աչաց իմոց. կամ նինջ արտեւանաց իմոց. կամ հանգիստ իրանաց իմոց. մինչև գտից զտեղի յարկի Տեառն Աստուծոյ Յակովբայ։

Ահա լուաք զնմանէ յԵփրաթայ. և գտաք զնա ՝ի դաշտս մայրեաց։

Մտցուք ՝ի յարկս նորա. երկիրպագցուք ՝ի տեղւոջ ուր կացեալ են ոտք նորա։

Արի՛ Տէր ՝ի հանգիստ քո դու և տապանակ կըտակի սրբութեան քո։

Երիցունք քո զգեցցին զարդարութիւն և սուրբք քո ցնծալով ցնծասցեն։

Վասն Դաւթի սիրելւոյ քո. մի՛ դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ։

Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ եւ ո՛չ ստեաց նմա. ՝ի պտղոյ ո՞ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա։

Թէ պահեսցեն որդիք քո զօրէնս իմ և զվկայութիւնս իմ զոր ուսուցից նոցա։

Որդիք նոցա նստցին յաթոռ քոյ։

Հաճեցաւ Տէր ընդ Սիօն. և ընտրեաց բնակիլ ՝ի նմա. ասէ՝ այս է՝ հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից. ՝ի սմա բնակեցայց՝ զի հաճեցայ ընդ սա։

Օրհնեալ սորա օրհնելով օրհնեցից. եւ զաղքատս սորա լցուցից հացիւ։

Երիցանց սորա ըզգեցուցից ըզփրկութիւն. եւ սուրբք սորա ցնծալով ցընծասցեն։

Ընդ ծագեցից եղջիւր ՝ի Դաւիթ. պատրաստ արարից զՔրիստոս օծելոյ իմոյ։

Թշնամեաց սորա զգեցուցից զամօթ. և ՝ի վերայ նորա ծաղկեսցի սրբութիւն իմ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

Եւ քարոզեսցէ Սարկաւագն։

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Խնդրեսցուք հաւատով միաբանութիւն ՝ի Տեառնէ, Զի զողորմութեան ըզշնորհս իւր արասցէ ՝ի վերայ մեր։

Ամենակալ Տէր Աստուած մեր, Կեցուսցէ եւ ողորմեսցի։

Եւ Աստացեն Երկոտասան Տէր ողորմեայս։

Ո՛վ սրբազան պատարագիչ՝ Յիշեա՛ յաղօթս քոյս զմատակարար եւ զամենայն զաշխատաւորս գործարանիս։

Եւ զհոգիս համայն Ընդունելոց նոցին ՝ի Քրիստոս Յիսուս։



(32597-Ա.Հ)
62-2001
ՀՍՍՌ ԱԳՐ.ՍՊՐ
(806256)
15931-58
h861





Աղօթք Առաքելական Պատարագիչ Քահանային
Յառաջ քան Զզգեստաւորիլն։

ՈՐ ԸՆԴԳԵՑԵԱԼ ԵՍ

ԶԼՈՅՍ ՈՐՊԷՍ ՀԱՆԴԵՐՁ ՏԷՐ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ։ Անճառելի խոնարհութեամբ յերկրի ելեւեցար և ընդ մարդկան շրջեցար։ Որ եղեր քահանայապետ յաւիտենից ըստ կարգին Մելքիսեդեկի և զարդարեցեր զեկեղեցի քո սուրբ։ Տէր ամենակալ որ պարգևեցեր մեզ զնոյն զերկնային հանդերձ զգեցուալ։ Արժանի արա և զիս 'ի ժամուս յայսմիկ զանպիտան ծառայս քո։ Որ համարձակիմ և մերձենամ 'ի նոյն հոգևոր պաշտօն փառաց քոց։ Որպէս զի զամենայն ամբարշտութիւնս մերկացայց՝ որ է՝ հանդերձ պղծութեան, և զարդարեցայց լուսով քով. ընկեալ յինէն զչարիս իմ, և թօթափեալ զյանցանս իմ։ Որպէս զի արժանի եղէց հանդերձեալ լուսոյդ առ 'ի քէն։ Շնորհեա՛ ինձ քահանայական փառաւք մտա-

նել 'ի պաշտօն սրբու-
թեանց քոց, ընդ այնոսիկ
որք անմեղութեամբ պա-
հեցին զպատուիրանս քո։
Զի և ես պատրաստ գը-
տայց երկնաւոր առադաս-
տիդ ընդ իմաստուն կու-
սանան. փառաւորել ըզ-
քեզ Քրիստոս որ բարձեր
զմեզ ամենեցուն։ Զի
դու ես սրբութիւն ան-
ձանց մերոց և քեզ բարե-
բարիդ Աստուծոյ վայելէ
փառք իշխա"։

Եւ մատուցեալ Սարկաւագունքն՝ Զգեցուս-
ցեն նմա զհանդերձն ասելով.
Եւ ես խաղաղութեան զՏէր աղա".
Քահանայն. Օրհնութիւն և փառք Հօր և".
Եւ յետ Օրհնութեանն՝ դիցէ յառաջ ըզ-
խոյսն 'ի դլուխն և ասասցէ.

ԴԻՐ ՏԷՐ ՍԱՂԱ-

ւարտ փրկութեա-
նըն 'ի գլուխս իմ, պատե-
բազմիլ ընդ զօրութիւնս
թշնամւոյն։
Շնորհօք Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի որում
վայելէ փառք իշխա".

Շապկին։

Օ գեցո՛ Տէր ինձ հան-
դերձ փրկութեան, եւ
պատմուճան ուրախու-
թեան։ Եւ շուրջ պատեա՛
զզգեստուվս փրկութեան։
Շնորհօք Տեառն մե".

Փոր Ուրարին։

Օ գեցո՛ Տէր պարանոցի
իմոյ զարդարութիւն։ Եւ
սրբեա՛ զսիրտ իմ յամե-
նայն աղտեղութենէ մե-
ղաց։ Շնորհօք Տեառն մե".

Գօտւոյն։

Շուրջ պատեսցէ կամար
հաւատոյ զմէջս սրտի իմոյ
և մտացս։ Եւ շիջուսցէ 'ի
սոցանէ զխորհուրդս աղ-
տեղիս։ Եւ զօրութիւն
շնորհաց քոց յամենայն
ժամ բնակեսցի՛ 'ի սոսա։
Շնորհօք Տեառն մե".

Բաղպան յաջ ձեռին։

Տո՛ւր Տէր զօրութիւն
աջոյ ձեռին իմոյ, և լուա՛
զամենայն աղտեղութիւ-
նըս իմ։ Որպէս զի կարող

լինիցիմ սպասաւորել քեզ
անախտութեամբ հոգւոյ
և մարմնոյ։ Շնորհօք".

Բաղպան յահեակ ձեռին։

Տո՛ւր Տէր զօրութիւն
ձախոյ ձեռին իմոյ, եւ
լուա՛ զամենայն աղտեղու-
թիւնս իմ։ Որպէս զի կա-
րող լինիցիմ սպասաւորել
քեզ անախտութեամբ
հոգւոյ և մարմնոյ։ Շնոր-
հօք Տեառն մե".

Վարսին։

Օ գեցո՛ Տէր պարանոցի
իմոյ զարդարութիւն։ Եւ
սրբեա՛ զսիրտ իմ յամե-
նայն աղտեղութենէ մե-
ղաց։ Շնորհօք Տեառն մե".

Եւ յետոյ եկեցեն առաջի Սրբոյ Սեղանոյն։
Եւ Քահանայն լուսացէ զձեռս ասելով։
Սաղմոս. Իե. կցորդ։

Լուացից սրբութեամբ".

Սարկաւագն. Փոխ։
Դատ արա՛ ինձ Տէր զի ես յամբիծու".

Քահանայն։

Եւ վասն Սրբուհւոյ Աս".

Սարկաւագն։
Սուրբ զԱստուածածինն և զամենայն".

Քահանայն։

Ընկա՛լ Տէր զաղաչանս".

Խոստովանիմ առաջի Աս-
տուծոյ և սրբուհւոյ Աս-
տուածածնին. և առաջի

Ցեռ զգեստաւորելոյ Սրբազան
զգեստուքն ասէ.

Ցնծասցէ անձն իմ 'ի
Տէր զի զգեցոյց ինձ հան-
դերձ փրկութեան եւ
պատմուճան ուրախու-
թեան. իբրև փեսայի եդ
ինձ պսակ. և որպէս զհար-
սն զարդու զարդարեաց
զիս։ Շնորհօք Տեառն մե".

Թաշկինակին։

Սրբեա՛ Տէր զձեռս իմ
յամենայն աղտեղութենէ
մեղաց։ Շնորհօք Տեառն".

Եւ յետոյ եկեցեն առաջի Սրբոյ Սեղանոյն։
Եւ Քահանայն լուսացէ զձեռս ասելով։
Սաղմոս. Իե. կցորդ։

Լուացից սրբութեամբ".

Սարկաւագն. Փոխ։
Դատ արա՛ ինձ Տէր զի ես յամբիծու".

Քահանայն։

Եւ վասն Սրբուհւոյ Աս".

Սարկաւագն։
Սուրբ զԱստուածածինն և զամենայն".

Քահանայն։

Ընկա՛լ Տէր զաղաչանս".

Խոստովանիմ առաջի Աս-
տուծոյ և սրբուհւոյ Աս-
տուածածնին. և առաջի

ամենայն սրբոց. և առաջի ձեր հարք և եղբարք զամենայն մեղս զորս գործեալ եմ. Քանզի մեղայ խորհրդով, բանիւ և գործով. Եւ ամենայն մեղքս զոր գործեն մարդիկ։ Մեղայ, մեղայ։ Աղաչեմ զձեզ խնդրեցէ՛ք վասն իմ յԱստուծոյ զԹողութիւն։

Պատասխանեսցեն սրբ մերձն են։

Ողորմեսցի՛ քեզ Աստուած հզօրն եւ Թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց, անցելոյն և այժմուս և յառաջակայէն փրկեսցէ եւ հաստատեսցէ յամենայն գործս բարիս։ Եւ հանգուսցէ զքեզ՝ի հանդերձեալ կեանսն. Ամէն։

Պատասխանեսցէ և Ինքն։

Աղաչեսցէ՛ և զձեզ մարդասէրն Աստուած, եւ Թողցէ զամենայն յանցանս ձեր. տացէ ժամանակ ապաշխարելոյ և գործելոյ զբարիս. ուղղեսցէ և զառաջակայ կեանս ձեր շնորհօք Սուրբ Հոգւոյն հզօրն և ողորմածն և նմա փառք յաւիտեանս ամէն։

Դպիրքն։

Յիշեսջիք զմեզ Առաջի անմահ Գառին Աստ՝.

Քահանայն։

Յիշեալ լիջի՛ք Առաջի անմահ Գառին Աստուծոյ։

Դպիրքն. Սաղմոս. ՂԹ. Փոխ։

Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր ծա՛.

Սարկաւագն Քարոզէ։

Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք զՏէր՝.

Քահանայն։

Ի մէջ տաճարիս և առաջի Աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ տեղւոյս խոնարհեալ երկիւղիս երկիրպագանեմք զսուրբ և զհրաշալի եւ զյաղթող զտէրութիւնդ քո փառաւորեմք, և քեզ մատուցանեմք զօրհնութիւն և ըզփառս ընդ Հօր և ընդ Հոգւոյդ Սրբոյ այժմ և՝։

Քահանայն ասասցէ Սաղմոս ԽԲ. կցորդ։

Եւ ելցէ՝ի խորանն։

Ա՝տից առաջի սեղանոյ՝.

Սարկաւագն. Փոխ։

Դատ արա՛ ինձ Աստուած և իրաւ արա՛ ինձ՝.

Սարկաւագն քարոզէ։

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեա՝.

Օրհնեսցուք զհայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ արժանի արար զմեզ կալ՝ի տեղւոջս փառաբանութեան և երգել զերգս հոգևորս ամենա՝.

Քահանայն. ՝ի Ձայն։

Ի յարկի սրբութեան և՝ի տեղւոջս փառաբանութեան. հրեշտակաց ընակարանիս և մարդկան քաւարանիս, առաջի աստուածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ տեղւոյս խոնարհեալ երկիւղիս երկիրպագանեմք. զսուրբ և զհրաշալի եւ զյաղթող զտէրութիւնդ քո օրհնեմք և փառաւորեմք. և քեզ ընդ երկնային զօրսն մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ այժմ և՝։

Իսկ եթէ Եպիսկոպոս լինիցի խորհրդածուն՝ ածցէ՝ի վերայ ընծայն զպատուական Եմիփորոնն։ Եւ մատուցեալ առ ընծայարան սեղանոյն։ Եւ՝ի ծունկս անկեալ յորդահոս արտասուօք լուռ և անմռունչ ասասցէ զաղօթս առ Սուրբ Հոգին անօրինիչ գործոյն։

Գրիգորի Նարեկացւոյն։

Ամենակալ բարերար մարդասէր Աստուած բոլորիս, յօրինող երևութիս և աներևութիս, փրկող եւ հաստատող, խնամող և խաղաղարար, հօր հզօր Հոգի, հայցեմք բազկատարած մաղթանաց գոչմամբ հեծութեան՝ յանդիման եղեալ քեզ ահաւորիդ։

Ա՝ստուծիմք մեծաւ գողութեամբ՝ սաստիկ երկիւղիւ՝ մատուցանել նախ զբանականս զայս պատարագ՝ քում անշնին զորութեանդ, իբր ամենակցի փառակցի և ա-

ըարչակցի հայրենի անկա-
պուտ պատուոյդ, և քըն-
նողի ծածկութեան խորոց
խորհրդոց ամենակատար
կամաց Հօրդ Էմմանուէլի՝
զքեզ առաքչի, փրկչի և
կենդանատուի և արարչի
ամենայնի։ Ի ձեռն քոյ
ծանուցաւ մեզ երրեակ
անձնաւորութիւն միաս-
նական աստուածութեա-
նըդ, յորոց մի և դու ճա-
նաչիս անհաս։ Քեզ և 'ի
ձեռն քոյ առաջինքն նա-
հապետական տոհմին շա-
ռաւիղք՝ տեսանողք ան-
ւանակոչեալք, զանցեալ-
սըն և զգալոցն, զեղեալ-
սըն եւ զոչ գոյացեալսն,
անբաստուերաբար բար-
բառով բանի վերա-
պատմեցին։

Հոգի Աստուծոյ քարո-
զեալ զքեզ Մովսէսի, որ
'ի գնալն քոյ 'ի վերայ ջրո-
ցըն՝ անպարագիր զօրու-
թիւն, ահեղ շրջարկու-
թեամբ տաճողականաւ՝
թեւապարփակ պաշտպա-
նողօրէն գթասիրեալ 'ի
ծնունդս նորոգս՝ զաւա-
զանին խորհուրդ
ծանուցեր։

Յոր կերպարան օրինա-
կութեան՝ նախ քան ըզ-
կառուցանել զլոյծդ մա-
ծուած վերջնում վարա-
գուրիդ՝ յօրինեցեր կա-
ղող տիրապէս զբուսան-
դակ բնութիւնս ամենից
բնաւից բոլորից գոյից ա-
մենայն էից՝ յանէից։ Քեզ
ստեղծանին 'ի նորոգու-
թիւն յարութեան ամե-
նայն եղեալքս առ 'ի քէն՝
յայնմ ժամանակի, որ է
օր վերջին՝ այսմ կենցաղի,
և օր առաջին՝ երկրին կեն-
դանեաց։ Քեզ հնազան-
դեցաւ միութեամբ կա-
մացն՝ որպէս հօրն իւ-
րում, աղդակիցն քո՝ էա-
կիցն հօր՝ անդրանիկն որ-
դի։ մերովս կերպիւ զքեզ

աւետարանեաց ճշմարիտ
Աստուած՝ հաւասար և
համագոյ հօր իւր հզօրի։
և զառ 'ի քեզ հայհոյու-
թիւնն անքաւելի քարո-
զեաց, և իբր զաստուա-
ծամարտիցն զքո հետե-
լոցն՝ չարաբանական բե-
րանս կարկեաց, և զիւրն
չնորհեաց՝ արդարն և ա-
նարատն՝ գտիչն ամենայ-
նի։ որ վասն մեզաց մերոց
մատնեցաւ, եւ յարեաւ
վասն զմեզ արդարացու-
ցանելոյ։
Նմա փառք 'ի ձեռն քո,
և քեզ բարեբանութիւն
ընդ Հօր ամենակալի յա-
ւիտեանս յաւիտենից։
Ամէն։



Դարձեալ կրկնեցից 'ի նոյն կարգ բանի, մինչեւ վստահութիւն վերհայեցողութեան լուսոյ՝ հրաշապէս յայտնեսցի։ Ազդեալ աւետարանեալ վերստին կրկին զնաղղութիւն։

Ա ՂԱՋԵՄՔ ԵՒ

աղերսեմք արտաքուստ ալից հառաչմամբ յամենայն անձնէ՝ զփառաւորեալ արարչութիւնդ՝ անեղծ և անբաստեղծ անժամանակ Հոգւոյդ գթածի, որ բարեխօսդ ես վասն մեր յանմռունչ հեծութիւնս՝ առ ողորմածդ հայր։ որ զսուրբսն պահես, և զմեղուցեալսն մաքրես՝ և տաճարս կազմես կենդանի և կեցուցիչ կամաց Բարձրեալդ Հօր։ Արդ՝ ազատեա՛ զմեզ յամենայն անմաքուր գործոց, որ ո՛չ է հաճոյ քում բնակութեան։ և մի՛ չիջցին առ 'ի մէնջ՝ լուսոյդ չնորհաց փայլմունք 'ի տեսականացս աչաց իմաստից։ վասն զի զքեզ ուսաք միանալ

'ի մեզ 'ի ձեռն աղօթից, և ընտիր վարուց խնկելոց։ Եւ քանզի մինդ յԵրրորդութենէդ պատարագի, եւ միւսդ ընդունի՝ հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի իւրոյ. իսկ դու ընկալցի՛ս զմեր պաղատանս, և յարդարեսցե՛ս զմեզ օթևանս պատուականս ամենայն պատրաստութեամբ՝ 'ի վայելումն ճաշակման երկնաւոր գառինդ, առանց պատժոց դատապարտութեան՝ ընդունիլ զայս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութեան։ Եւ հալեսցի՛ 'ի հրոյս յայմանէ գայթակղութիւնս մեր, որպէս մարդարէին կենդանախարոյկ կայծակամբն՝ 'ի ձեռն ունելեացն մատուցման. զի յամենայնի քոյդ քարոզեսցի գթութիւն, որպէս Որդւովդ Աստուծոյ Հօր քաղցրութիւն. որ զանառակ որդին մերձեցոյց 'ի հայրենի ժառանգութիւնն, և զպոռնիկն յառաջեցոյց յերկնային արքայութիւնն՝ արդարոցն երանութեան։

Այո՛, այո՛, և ես մի եմ 'ի նոցանէ. և զիս ընկալ ընդ նոսին իբր մարդասիրութեան կարօտեալ մեծի, շնորհօք քո ապրեալ, զարեամբ Քրիստոսի ըստացեալս։ Զի յայսմ ամենայնի՝ յամենայնի ծանիցի քո՛ աստուածութիւնդ՝ ընդ Հօր փառաւորեալ համապատուաբար 'ի մի կամս, և 'ի մի իշխանութիւն գովութեան։

'ի Զայն։

Օ՛ի քո՛ է գթութիւն, և կարողութիւն, և մարդասիրութիւն, զօրութիւն եւ փառք յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Ապա յարուցեալ դայ առ ընծայարան Սեղանոյն։ Եւ որ մատուցանէ նախասարկաւագն ընչարն։

Զոր առեալ քահանայն դնէ 'ի մաղըմայն ասելով։

Յիշատակ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Որ բազմեալ հանդէպ յանարուեստ աթոռ. զմահ խաչի յանձն էառ վասն ազգի մարդկան. ☞ օրհնեցէ՛ք՝ գովեցէ՛ք և բա՛րձր արարէ՛ք զնա յաւիտեան։

Եւ առեալ զգինին՝ արկանէ խաչանիշ 'ի Սկիհն ասելով։

Յաղագս յիշատակի փրկագործ Տնօրէնութեան Տեառն Աստուծոյ եւ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Որ 'ի կողահոս արեան աղբերէն նորոգեցան՝ արաւրածք եւ անմահացան. ☞ օրհնեցէ՛ք՝ գովեցէ՛ք եւ բա՛րձր արարէ՛ք զնա յաւիտեան։

Եւ ասասցէ զաղօթս 'ի ծածուկ Յօհաննու Ոսկեբերանին։

Տէր Աստուած մեր որ զերկնաւոր հացդ զտէրն մեր Յիսուս Քրիստոս ըզկերակուրդ ամենայն աշխարհի՝ առաքեցեր փրկիչ և կեցուցիչ և բարերար՝ ☞ օրհնել և սրբել ըզմեզ. ինքնին դու Տէր ☞ օրհնեա՛ և այժմ զառաջադրութիւնս զայս։ Ընկա՛լ զսա յերկնային քո սեղանդ։

Յիշեա՛ որպէս բարերար եւ մարդասէր զմատուցողս եւ վասն որոց մատուցանի։

Եւ զմեզ անդատապարտ պահեա՛ 'ի քահանայագործութիւն աստուածային խորհրդոց քոց։ Զի սուրբ և փառաւոր է ամենապատիւ մեծ վայելչութիւն փառացդ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ Սրբոյ այժմ և".

Եւ սքողեսցէ ասելով. Սաղմոս ՂԲ.

Տէր թագա". Հաստա". Ամբարձան". Ի ձայնէ". Սքանչելի". Տան քում".

Եւ խաչակնքեսցէ երիցս ասելով։

Հոգին Սուրբ եկեսցէ 'ի քեզ և զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի 'ի վերայ քոյ։

Եւ արկանէ զխունկն ասելով։

Խունկ մատուցանեմ առաջի քոյ Քրիստոս Բուրումն հոգևորական։ Ընկա՛լ 'ի սուրբ յերկնային և յիմանալի քո՛ մատուցարանդ 'ի հոտ անուշից։ Առաքեա՛ առ մեզ փոխարէն զշնորհս և զպարգևս Հոգւոյդ Սրբոյ. եւ քեզ մատուցանեմք ըզփառս ընդ Հօր և ընդ Հոգւոյդ Սրբոյ այժմ և".

Եւ ապա խնկելով 'ի մէջ Եկեղեցւոյն ինքանէ հանդերձ սարկաւագօքն, և ելեալ 'ի վեր երիցս երկրպագեսցէ զՊեղանն։
Եւ Նախասարկաւագին 'ի մէջ Եկեղեցւոյ կալով ձայնեսցէ։

Օրհնեա՛ Տէր։

Եւ Քահանայն 'ի Ձայն ասասցէ։

Օրհնեալ Թագաւորութիւնն Հօր և Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ և միշտ և յաւի".

Եւ սկսանին դպիրքն Ժամամուտ ըստ պատշաճի աւուրն։ Եւ յաւարտիլն ձայնեսցէ Նախասարկաւագն։ Եւ ևս խաղաղո՛ւ".

Օրհնեա՛ Տէր։

Եւ Քահանայն ասասցէ։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և".

Խաղաղութիւն ամենեցուն։

Դպիրքն. Եւ ընդ հոգւոյդ քում։

Սարկաւագն։

Աստուծոյ երկրպագեսցուք։

Դպիրքն. Առաջի քո Տէր։

Եւ Քահանայն ասասցէ 'ի Ձայն։

Տէր Աստուած մեր՝ որոյ կարողութիւնդ անքննին է. եւ փառքդ անհասանելի։ Որոյ ողորմութիւնդ անչափ է. և գթութիւնդդ անբաւ։ Դու ըստ առատ մարդասիրութեանդդ քում, նայեա՛ց 'ի ժողովուրդս քո՝ և 'ի տաճարս այս սուրբ։ Եւ արա՛ ընդ մեզ եւ ընդ աղօթակիցս մեր՝ առատապէս զողորմութիւն քո և զգթութիւն։ Զի քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և".

Եւ սկսանին աստ Դպիրքն Սաղմոս և Շարական ըստ պատշաճին։

Եւ մինչ նոքա երգեն, Քահանայն ասասցէ զԱղօթս։ Ի ծածուկ։

Տէր Աստուած մեր կեցո՛ զժողովուրդս քո. և օրհնեա՛ զժառանգութիւնս քո. զլրումն Եկեղեցւոյ քո պահեա՛. սրբեա՛ զստոսա որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քոյ։ Դու զմեզ փառաւորեա՛ աստուածային զօրութիւնքով. և մի՛ թողուր զյուսացեալս 'ի քեզ։ Զի քո է կարողութիւն եւ զօրութիւն և փառք յաւի".

Խաղաղութիւն ամենեցուն։

Որ հաստարակաց զայս և միաձայն մեզ ամենեցուն՝ ուսուցեր աղօթել. և զերկուց և զերից միաձայնելոց յանուն քո՝ ցխնդրուածս պարգևել խոստացար։ Դու և այժմ զծառայից քոց զխնդրուածս առ 'ի յօգուտն կատարեա՛։ Շնորհելով մեզ յայսմ յաւիտենիս զգիտութիւն քումդ ճշմարտութեան։ Եւ 'ի հանդերձեալն ըզկեանսն յաւիտենականս պարգևելով։ Զի բարերար և մարդասէր ես Աստուած. եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն".

Եւ 'ի փառք տան Դպրաց, երկրպագցեն առաջի բեմին ամենեքեան։
Եւ Քահանայն երկրպագելով Սեղանոյն ասասցէ զԱղօթս։ Ի ծածուկ։

Տէր Աստուած մեր՝ որ կարգեցեր յերկինս զդասս և զզինուորութիւնս հրեշտակաց եւ հրեշտակապետաց 'ի սպասաւորութիւն փառաց քոյ։ Արա՛ այժմ ընդ մուտս մեր մտանել և սրբոց հրեշտակաց. և լինիլ պաշտօնակից մեզ՝ եւ փառաբանակից քում բարերարութեանդ։

'Ի Ձայն։

Օ ի՛ քո՛ է կարողութիւն, և զօրութիւն, և փառք յաւիտեանս. Ամէն։

Եւ հաՀՐՈՐԵՍՑԷՆ զՍԵՂԱՆՆ, և Սարկաւագունքն գոչեսցեն։

ՊՐՕՍԽՈՒՄՔ։

Եւ Սարկաւագաց մի ոմն բարձրացուցանէ զԱւետարանն Սուրբ։

Եւ Դպիրքն ըստ խորհրդոյ աւուրն երգեն զՆերեք սրբեանն։

Սուրբ Աստուած սուրբ և հզօր սուրբ և անմահ որ խաչեցար՝. և այլն։

Եւ Քահանայն զոգ սմին ասասցէ. Ի ծածուկ։

Աստուած Սուրբ՝ որ 'ի սուրբս հանգուցեալ ես, եւ երեք սրբեան ձայնիւ Սերովբէք գովեն զքեզ՝ եւ Քերովբէք փառաբանեն. և ամենայն երկնային զօրութիւնք՝ քեզ երկիրպագանեն։ Որ 'ի չգոյէ 'ի գոյ ածեր զամենայն արարածս. որ արարեր զմարդն ըստ պատկերի քում եւ նմանութեան. և ամենայն շնորհիւ քով զնա զարդարեցեր. և ուսուցեր խընդրել զիմաստութիւն և ըզգօնութիւն։ Եւ ո՛չ անտես արարեր զմեզուցեալն, այլ եդեր 'ի վերայ Նորա ապաշխարութիւն փրկութեան։ Որ արժանի արարեր զմեզ զնուաստացեալ և զանարժան ծառայսս քո 'ի ժամուս յայսմիկ, կալ առաջի փառաց սրբութեան սեղանոյ քոյ։ Եւ զօրինաւոր երկրպագութիւն և զփառաբանութիւն մատուցանել քեզ։ Դու Տէր՝ ընկա՛լ 'ի բերանոյ մեղաւորացս զերեք սրբեան օրհնութիւնս. եւ պահեա՛ ըզմեզ քոյին քաղցրութեամբդ. թո՛ղ մեզ զամենայն յանցանս մեր ըզկամայ և զակամայ։ Սրբեա՛ զհոգի՝ զմիտս՝ և ըզմարմինս մեր. և շնորհեա՛ 'ի սրբութեան պաշտել զքեզ զամենայն աւուրս կենաց մերոց։ Բարեխօսութեամբ Սրբուհւոյ Աստուածածնին և ամենայն Սրբոց քոց՝ որք յաւիտենից քեզ բարեհաճոցան։

Զի սուրբ ես Տէր Աստուած մեր. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և՝.

Եւ 'ի կատարիլ երեք սրբենցն և աղօթիցն՝ Սարկաւագն քարոզէ։

Եւ ես խաղաղութեան զՏէր՝. Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և՝.

Եւ Քահանայն՝ բաղկատարած ասասցէ զԱղօթս, 'ի Ծածուկ։

Տէր Աստուած մեր՝ ըզբազկատարած զաղաչանս ծառայից քոց վերընկալցիս և ողորմեսցիս ըստ մեծի ողորմութեան քում։ Զգթութիւն քո առաքեա՛ 'ի վերայ մեր և ամենայն ժողովրդեանս՝ որք ակն ունին առ 'ի քէն առատ ողորմութեանդ։

Սարկաւագն ձայնեսցէ։

Օրհնեա՛ Տէր։

Եւ Քահանայն ասասցէ, 'ի Ձայն։

Օ՛ի ողորմած և մարդասէր՝ ես Աստուած գոլով և քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ այժմ և միշտ և յաւի՛՝.

Ցեսո այսորիկ՝ երկրպագէ Սեղանոյն Քահանայն, և եկեալ բազմի յաստիճանն։ Եւ սկսանին Դպիրքն Սաղմոս ըստ խորհրդոյ աւուրն։

Եւ ընթերցցին զգիրս Մարգարէականս և զԱռաքելականս։

Եւ զկնի ալէլուիայ, ըստ յուցանելոյ ընթերցուածոյն. և յաւարտմանն՝

Սարկաւագն ձայնեսցէ։

Օրթի։

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ 'ի վերայ ժողովրդեանն ասելով։

Խաղաղութիւն ամենեցուն։

Դպիրն։

Եւ ընդ հոգւոյդ քում։

Սարկաւագն։

Երկիւղածութեամբ լուարուք։

Սարկաւագն։

Սրբոյ Աւետարանիս Որ ըստ Մատթէոսի։

Դպիրն։

Փառք քեզ Տէր Աստուած մեր։

Սարկաւագն։

Պրօսխումք։

Դպիրն։

Ասէ Աստուած։

Եւ Սարկաւագն ընթերցցի զԱւետարանն Սուրբ. Եւ յաւարտմանն՝ ասասցէն Ամենեքեան։

Փառք քեզ Տէր Աստուած մեր։

Եւ ապա ասէն զՆիկիական դաւանութիւնն 'ի լման։

(25931-58) (8062-10) 62-2204

ՀԱՅԿ ՀԱՅԵՐԷՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀՈՍ. ԱՐՄ. ՍՍՀ Հ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՒԱՏԱՄՔ Ի ՄԻ ԱՍՏՈՒԱԾ

Աստուած Հայր ամենակալ, յարարիչն երկնի և երկրի, երեւելեաց և անտեսանելեաց։

Եւ ՚ի մի Տէր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին. այսինքն յէութենէ Հօր։

Աստուած յԱստուծոյ՝ լոյս ՚ի լուսոյ՝ Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած։ Նոյն ինքն ՚ի բնութենէ Հօր որով ամենայն ինչ եղեւ յերկինս և ՚ի վերայ երկրի, երեւելիք և անտեսանելիք։

Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից մարմնացաւ մարդացաւ ծնաւ կատարեալապէս ՚ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով։

Որովհետեւ մարմին հոգի եւ միտ. եւ զամենայն որ ինչ է ՚ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք։

Չարչարեալ խաչեալ թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ ՚ի յերկինս նստաւ ընդ աջմէ Հօր։

Դալոցէ նստիցի մարմնովն և փառօք Հօր, ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս։ Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։

Հաւատամք և ՚ի սուրբ Հոգին յանեղն և ՚ի կատարեալն։ Որ խօսեցաւ յօրէնս և ՚ի Մարգարէս և յԱւետարանս։

Որ եջն ՚ի Յորդանան քարոզեաց զԱռաքեալն եւ բնակեցաւ ՚ի սուրբսն։

Հաւատամք և ՚ի մի միայն ընդհանրական և առաքելական Եկեղեցի։

Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ՚ի քա-

ւութիւն, եւ ՚ի թողութիւն մեղաց։ Ի յարութիւն մեռելոց։ Ի դատաստանն յաւիտենից։

Հոգւոց և մարմնոց յարքայութիւնն երկնից, և ՚ի կեանսն յաւիտենականս։

Իսկ որք ասեն՝ էր երբեմն յորժամ ոչ էր Որդին. կամ էր երբեմն յորժամ ոչէր Սուրբ Հոգին. կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ և կամ զՍուրբ Հոգին. և թէ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսին նզովէ կաթուղիկէ և առաքելական սուրբ Եկեղեցի։

Լուսաւորչին ասացեալ։

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջքան ըզյաւիտեանս երկիրպագանելով Սրբոյ Երրորդութեանն և միասնութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և յաւի՛ա։

Սարկաւագն քարոզէ ՚ի ձայն։
Եւ ես խաղաղութեան զՏէր աղա՛։
Դպիրն. Տէր ողորմեա՛։
Եւ ես հաւատով աղաչե՛ս։
Մինչ նոքա երգեն, քահանայն ասասցէ զՍաղմոս, ՚ի Ծածուկ։

Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս որ մեծդ ես ողորմութեամբ, և առատ պարգեւօք բարերարութեան քոյ։ Որ դու քոյին կամաւ ՚ի ժամուս յայսմիկ համբերեցեր չարչարանաց խաչի և մահու յաղագս մեղաց մերոց։

Եւ պարգեւեցեր առատապէս զպարգեւս Հոգւոյդ Սրբոյ երանելի Առաքելոցն։ Հաղորդս արա՛ և զմեզ Տէր աղաչեմք ըզքեզ աստուածային պարգեւացդ. Թողութեան մեղաց՝ եւ ընդունելութեան Հոգւոյդ Սրբոյ։

՚Ի Ձայն։

Որպէս զի արժանաւորք եղիցուք գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և Սուրբ Հոգւոյդ՝.

☞ Խաղաղութիւն ամենեցուն։

Խաղաղութեամբ քով Քրիստոս փրկիչ մեր՝ որ 'ի վե՛ր է քան զամենայն միտս և զբանս։ Ամրացո՛ զմեզ և աներկիւղ պահեա՛ յամենայն չարէ։

Հաւասարեա՛ զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո՝ որք հոգւով և ճշմարտութեամբ քեզ երկիրպագանեն. վասն զի ամենասուրբ Երրորդութեանդ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս Ամէն։

Սարկաւագն։

Օրհնեա՛ Տէր։

Քահանայն խաչակնքէ 'ի վերայ ժողովրդեանն ասելով, 'ի Զայն։

Տէր Աստուած ☞ օրհնեսցէ զամենեսեան։

Յետ այսորիկ՝ եթէ Եպիսկոպոս լցէ 'ի բաց հանցէ զԵմվխորանն։

Սարկաւագն։

Աղաղակեսցէք Տեառն Աստուծոյ մեր".

Դպիրն. Ասեն զՍրբասացութիւնն ըստ խորհրդոյ աւուրն։

Սարկաւագն։

Մի՛ ոք յերախայից։

Դպիրն։

Մարմին Տէրունական։

Եւ դան խնկարկելով 'ի Սուրբ Խորհուրդն։

Սարկաւագն։

Յարեւու Եհար զնոս".

Դպիրն։

Եւ ցնծայ նա որպէս հրա".

Եւ ապա եղանակեսցեն։

Ոչք զՔրովբէիցն։

Աղա Սարկաւագայն վերաբերիցի Սրբազան հացն՝ և անմահութեան բաժակն 'ի Սուրբ Սեղանն։ Եւ մինչ նոքա երգեն՝ Քահանայն խոնարհեսցի առաջի Սրբոյ Սեղանոյն և խորհրդաբար աղօթեսցէ։ 'ի Ծածուկ։

Ո՛չ ոք արժանի է յըմբռնելոցս մարմնաւոր ախտիւք եւ ցանկութեամբ մատչել 'ի սեղան քո. կամ, սպասաւորել արքունական փառաց քոց։ Քանզի պաշտել զքեզ մեծ և ահաւոր՝ երկնաւոր զօրութեանցդ իսկ է։

Սակայն վասն անչափ բարերարութեան քոյ՝ անպարագրելի բանդ Հօր, եղեր մարդ՝ և Քահանայապետ մեր երեւեցար։

Եւ իբր տէր ամենեցուն այսմ սպասաւորութեան՝ և անարիւն զենման՝ զքահանայութիւն աւանդեցեր մեզ։ Վասն զի դու ես Տէր Աստուած մեր որ տիրես երկնաւորաց եւ երկրաւորաց։ Որ 'ի վերայ Քերովբէական աթոռոյ բազմիս. Սերովբէից Տէր եւ Թագաւոր Իսրայէլի։ Որ միայն սուրբ ես և 'ի սուրբս հանգուցեալ։

Աղաչեմ զքեզ միայն բարերար և հեշտալուր. նայեա՛ յիս 'ի մեղուցեալ և յանպիտան ծառայս քո։ Եւ սրբեա՛ զհոգի և զմիտս իմ յամենայն պղծութենէ չարին։ Եւ բաւականացո՛ զիս զօրութեամբ Սուրբ Հոգւոյդ որ զդեցեալ եմ զքահանայականս շնորհս, կալ առաջի սրբոյ Սեղանոյս և քահանայագործել զքո՛ անարատ մարմնիդ և զպատուական արիւնդ։

Քեզ խոնարհեցուցեալ զպարանոցս իմ, մաղթեմ. մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն. և մի՛ մերժեր զիս 'ի ծառայից քոց։ Այլ արժանի արա՛ մատուցանել քեզ զընծայս զայս յինէն 'ի մեղուցեալ և յանարժան ծառայէս քումմէ։

Վասն զի դու ես որ մատուցանես՝ և մատչիս՝ և ընդունիս, և տաս Քրիստոս Աստուած մեր։ Եւ քեզ փառս մատուցանեմք հանդերձ անսկիզբն քո Հարրդ եւ ամենասուրբ եւ բարերար Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Եւ ընծայքն վերաբերին 'ի Սեղանն։

Եւ քահանայն խնկեսցէ և լուսացէ ըստ մատուանն ասելով։

Լուսացից սրբութեամբ զձեռս իմ".

Սարկաւագն։

Եւ ես խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. Եւ ես հաւատով և սրբութեամբ կաց".

Մինչ նոքա քարոզեն. Քահանայն բաղկատարած աղօթեսցէ 'ի ծածուկ։

ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ

Զօրութեանց և արարիչ ամենայն լինելութեանց։ Որ յանէութենէ ըզքնաւս 'ի ցուցակութիւն ածեալ գոյացուցեր։ Որ եւ զմերս զհողեղէն բնութիւնս պատուեալ մարդասիրապէս. այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս։

Դու Տէր՝ որում պատարագեմք զպատարագիս՝ ընկալ առ 'ի մէնջ զառաջադրութիւնս զայս, եւ աւարտեա՛ զսա 'ի խորհրդականութիւն մարմնոյ և արեան միածնի քոյդեղ թողութեան մեղաց պարգևեա՛ ճաշակողացս զհացս զայս եւ զբաժակս։

'ի Զայն։

Շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի. ընդ որում քեզ Հօր միանգամայն և Հոգւոյդ Սրբոյ վայելէ փառք իշխա՛".

Խաղաղութիւն ամենեցուն։

Դպիրն. Եւ ընդ հոգւոյդ քում։

Սարկաւագն.

Աստուծոյ երկրպագեսցուք։

Դպիրն. Առաջի քո Տէր։

Սարկաւագն։

Ողջոյն տուք միմեանց 'ի համբոյր՛".

Դպիրն. Քրիստոս 'ի մէջ մեր յայտ՛".

Եւ համբուրեն զՍեղանն և զմիմեանս. Եւ Սարկաւագն ձայնեսցէ։

Ահիւ կացցուք երկիւղիւ կաց՛".

Դպիրն. Առ քեզ Աստուած։

Սարկաւագն։

Պատարագ Քրիստոս մատ՛".

Դպիրն. Ողորմութիւն և խաղաղութիւն՛".

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ և ասասցէ 'ի Զայն։

Շնորհք, սէր և աստուածային սրբարար զօրութիւնն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան։

Դպիրն. Ամէն և ընդ հոգւոյդ քում։

Սարկաւագն։

Զգրուեսս զգրուեսս ամենայն՛".

Դպիրն. Ունիմք առ քեզ Տէր ամենակալ։

Սարկաւագն։

Եւ գոհացարուք՛".

Դպիրն. Արժան և իրաւ։

Մինչ նոքա երգեն Քահանայն ձեռնամած աղօթեսցէ, 'ի ծածուկ։

Արժան է ստուգապէս և իրաւ՝ ամենայորդոր փութով միշտ երկիրպագանելով փառաւորել զքեզ Հայր ամենակալ։ Որ քոյին անեղնելի և աներաչափիս բանիւդ զանի. ծիցն բարձեր զկրճիմն։ Նոր ժողովուրդ ինքեան առեալ զեկեղեցի սեպհականեաց ըզհաւատացեալս 'ի քեզ։ Եւ զնեալի բնութեամբ ըստ 'ի Կուսէն տնտեսութեան՝ հաճեցաւ բնակիլ 'ի մեզ։ Եւ նորագործ աստուածապէս ճարտարապետեալ՝ զերկիրս երկին արար։

Այսն զի որում ոչն հանդուրժէին առաջի կալ զուարթնոցն ջոկք՝ զարհուրեալք 'ի փայլակնացայտ և յանմատոյց լուսոյ Աստուածութեանդ։ Եղեալ այդպիսի մարդ՝ յաղագս մերոյ փրկութեան շնորհեաց մեզ ընդ երկնայինսն պարել զհոգեղէն պարս։

'ի Զայն։

Եւ ընդ Սերովբէսն եւ ընդ Քերովբէսն միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս. և համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոսին և ասել։

Դպիրն։

Սուրբ Սուրբ Սուրբ Տէր զօրութեանց լի են երկինք եւ երկիր փառաք քոյ օրհնութիւն 'ի բարձ՛".

Մինչ նոքա երգեն. Քահանայն բազմատարած աստուցէ, 'ի Ծածուկ։

ՍՈՒՐԲ՝ Սուրբ՝ Սուրբ Ես Ճշմարտապէս և ամենասուրբ. և ո՛վ ոք պանծասցի բովանդակեալ բանիւ զքո 'ի մեզ զանբաւ բարեգործութեան զեղմունս։

Որ և անդէն իսկ 'ի նախնումն զանկեանն ընդ մեզ զանազան եղանակօք՝ խնամեալ սփոփեցեր։

Մարգարէիւք, օրինացն տուչութեամբ, քահանայութեամբ, և ըստուերակերպ երնջուցն մատուցմամբ։

Իսկ 'ի վախճան աւուրցս այսոցիկ՝ զբովանդակ իսկ զպարտեաց մերոց խլեալ զդատակնիք։

Զտուր մեզ զՈրդիդ քո միածին, պարտապան եւ պարտս. զենումն և օծեալ. գառն և երկնաւոր հաց. քահանայապետ և պատարագ։

Այսն զի ինքնդ է բաշխող. և նոյն ինքնդ բաշխի 'ի միջի մերում միշտ անծախապէս։

Այսն զի եղեալ հաւատեաւ և առանց ցնորից մարդ. և անշփոթ միաւորութեամբ մարմնացեալ յԱստուածածնէն եւ 'ի Սուրբ Կուսէն Մարիամայ։

Ո՛անապարհորդեաց ընդ ամենայն կիրս մարդկային կենցաղոյս առանց մեղաց։

Եւ յաշխարհակեցոյցն եւ առիթն փրկութեան մերոյ՝ եկեալ կամաւ 'ի խաչ։

Առեալ զհացն՝ 'ի սուրբ յաստուածային՝ յանմահ՝ յանարատ՝ եւ յարարչագործ՝ 'ի ձեռս իւր. օրհնեաց՝ գոհացաւ՝ եբեկ՝ եւ ետ իւրոց ընտրեալ սուրբ և բազմեալ աշակերտացն ասելով։

'ի Զայն։

Առէ՛ք Կերէ՛ք Այս է՝ ՄԱՐՄԻՆ ԻՍ՝ որ վասն ձեր և բազմաց բաշխի 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։

'ի Ծածուկ։

Նոյնպէս եւ զբաժակն առեալ. օրհնեաց՝ գոհացաւ՝ էարբ՝ և ետ իւրոց ընտրեալ սուրբ եւ բազմեալ աշակերտացն ասելով։

'ի Զայն։

Արբէ՛ք 'ի Սմանէ Ամենեքեան. Այս է՝ ԱՐԻՒՆ ԻՍ՝ նորոյ ուխտի, որ յաղագս ձեր եւ բազմաց հեղանի 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։

'ի Ծածուկ։

Եւ զսոյն միշտ իւր յիշատակ առնել, պատուիրան աւանդեաց մեզ բարերար Որդիդ քո միածին։

Եւ իջեալ 'ի ստորին վայրս մահու մարմնոյն՝ զոր 'ի մերմէս ընկալաւ յաղագակցութենէ։ Եւ զնիգս դժոխոցն աղարտեալ հրաշալիս։ Զքեզ միայն ծանոյց մեզ Ճշմարիտ Աստուած՝ զԱստուածդ կենդանեաց և մեռելոց։

Եւ առնու զԸնծայն 'ի Ձեռն Եւ ասասցէ, 'ի Ծածուկ։

Նշարդ մեք Տէր՝ ըստ այսմ հրամանատրութեան յառաջ բերեալ զայս խորհուրդ փրկական մարմնոյ և արեան միածնի քոյ։

Յիշեմք զդորա որ վասն մեր զփրկագործ չարչարանսն։ Զկենսատու խաչելութիւնն։ Զերեքօրեայ թաղումն։ Զերանելի յարութիւնն։ Զաստուածապէս համբարձումն։ Ընդ նստիլն ընդ աջմէ քո Հայր։ Զահաւոր և զփառաւորեալ զմիւսանգամ գալուստն խոստովանիմք և օրհնեմք։

Եւ զԸնծայն սակաւ ինչ բարձրացուցեալ մատուցցէ առ Հայր։
Եւ դիցէ ի վերայ Սրբոյ Սեղանոյն ասելով ի Ձայն։

Եւ զքոյս՝ ի քոյոց՝ քեզ մատուցանեմք ըստ ամենայնի և յաղագս ամենեցուն։

Դպիրն. Յամենայնի Օրհնեալ ես Տէր".

Մինչ նոքա երգեն՝ Քահանայն բակամարած ասացէ, ի Ծածուկ։

Օ՛ քեզ արդարև Տէր Աստուած մեր գովեմք. եւ զքէն գոհանամք հանապազ։ Որ զանց արարեր զմերով անարժանութիւն. այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս։

Ո՛չ յաղագս մերոց ինչ բարեգործութեանց, յորոց յոյժ թափուր եմք և միշտ ունայն գտանիմք հանապազ։

Այլ՝ի քո բազմագեղն ողորմութիւնդ ցանգ ապաւինեալ համարձակիմք մերձենալ՝ի սպասաւորութիւն Մարմնոյ և Արեան միածնի քոյ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի. որում վայելէ փառք իշխանութիւն և".

՝ի Ձայն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Դպիրն. Եւ ընդ հոգւոյդ քում։
Սարկաւագն։
Աստուծոյ երկիրպագեսցուք։
Դպիրն. Աւաջի քո Տէր։
Մինչ նոքա երգեն՝ Քահանայն խոնարհեալ երկիրպագցէ Սեղանոյն և ասացէ։

Երկիրպագանեմք՝ և աղաչեմք՝ եւ խնդրեմք՝ի քէն բարերար Աստուած։ Աւաքեա՛ ի մեզ եւ յառաջի եդեալ Ընծայս այս զմշանջենաւորակից քո և զեակից Սուրբ Հոգիդ։

Դպիրն. Որդի Աստուծոյ որ Պատարա".

Եւ կացեալ Սարկաւագն առ ընթեր Քահանային երկիւղիւ և դողութեամբ մեծաւ։ Եւ ասացէ՝ի ցած՝ Ամէն օրհնեա՛ Տէր։ Եւ Քահանայն խաչակնքեսցէ զԸնծայն ասելով՝ի Ծածուկ։

Որով զՀացս Օրհնեա՛ Մարմին Ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի։

Որով զՀացս Օրհնեա՛ Մարմին Ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ և փրկչին Յի՛ Քի։

Որով զՀացս Օրհնեա՛ Մարմին Ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ և փրկչին Յի՛ Քի։

Եւ զբաժակս Օրհնեա՛ Արիւն ստուգապէս արասցես Տեառն մերոյ և փրկչին Յի՛ Քրիստոսի։

Եւ զբաժակս Օրհնեա՛ Արիւն ստուգապէս արասցես Տեառն մերոյ և փրկչին Յի՛ Քրիստոսի։

Եւ զբաժակս Օրհնեա՛ Արիւն ստուգապէս արասցես Տեառն մերոյ և փրկչին Յի՛ Քրիստոսի։

Որով զՀացս եւ զգինիս Օրհնեա՛ Մարմին և Արիւն Ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ և փրկչին Յի՛ Քի՛ փոխարկելով Հոգւովդ քով Սրբով։

Երեցս կրկնեսցէ։

Ապա ասացէ՝ի Ձայն։

Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս, յանդատապարտութիւն՝ի քաւութիւն և՝ի թողութիւն մեղաց։

Եւ Քահանայն ոչ ստահեալ ոչ բարձրագոյն քան զԸնծայն զձեռն իւր տարածեալ, այլ՝ խոնարհագոյն, եւ զաչն՝ի նոյն յառեալ աղօթեսցէ. ՝ի Ծածուկ։

Սովաւ շնորհեա՛ զքէր զհաստատութիւն եւ զբղձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի։ Սրբոյ Եկեղեցւոյ և ամենայն ուղղափառ Եպիսկոպոսաց։ Քահանայից։ Սարկաւագաց։ Թագաւորաց։ Աշխարհի։ Իշխանաց։ Ժողովրդոց։ Ճանապարհորդելոց։ Նաւելոց։ Կապելոց։ Վտանգելոց։ Աշխատելոց։ Եւ որք՝ի պատերազմունս բարբարոսաց։

Սովաւ և օդոյ շնորհեա՛ զբարեխառնութիւն. և անդոյ ըզպտղաբերութիւն։ Եւ ախտացելոց՝ի

պէսպէս ցաւս՝ փուրթա-
պէս զառողջութիւն։
Սովաւ հանդո՛ զամենե-
սեան յառաջագոյն 'ի
Քրիստոս զննչեցեալսն։
Զնախահարս։
Զհայրապետս։
Զմարդարէս։
Զառաքեալս։
Զվկայեալս։
Զեպիսկոպոսունս։
Զերիցունս։
Զարկաւագունս։
Եւ զքնաւ ուխտ եկեղե-
ցւոյ քոյ սրբոյ։ Եւ զամե-
նեսեան յաշխարհական
կարգէ զարս և զկանայս
հաւատով վախճանեալս։

'ի Զայն։

Ընդ որս և մեզ այց ա-
րասցես բարերար Ատ-
ուած աղաչեմք։

Դպիրն։ Յիշեա՛ Տէր և ողորմեա՛։

Քահանայն։

Աստուածածնին Սրբոյ
Կուսին Մարիամու։ Եւ
Յովհաննու Մկրտչին։ Ըս-
տեփաննոսի նախավկա-
յին։ Եւ ամենայն Սրբոց
եղիցի յիշատակ 'ի սուրբ
Պատարագս աղաչեմք։

Դպիրն։ Յիշեա՛ Տէր և ողորմեա՛։

Սարկաւագն յաջակողմն Սեղանոյն։
Ձեռնամած ասասցէ։

Առաքելոց Սրբոց Մարգարէից"։

Եւ մինչ նոքա երգեն զքարոզս, քա-
հանայն ասասցէ զԱղօթս 'ի Ծածուկ
զի 'ի միասին աւարտեսցին։

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛,
եւ օրհնեա՛ զՍուրբ Կա-
թուղիկէ և զԱռաքելա-
կան Եկեղեցի քո։

Օ որ փրկեցեր պատուա-
կան արեամբ Միածնի քո.
եւ ազատեցեր Խաչիւն
Սրբով։

Շնորհեա՛ սմա զանշարժ
զխաղաղութիւն։

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛,
և օրհնեա՛ զամենայն ուղ-
ղափառ Եպիսկոպոսունս՝
որք ուղիղ վարդապետու-
թեամբ համառօտեն 'ի
մեզ զբանն ճշմարտու-
թեան։

'ի Զայն։

Եւ առաւել զԵպիսկո-
պոսապետն մեր, եւ
զպատուական Հայրապե-
տն ամենայն Հայոց զՏէր
(այս անուն), շնորհեսցես մեզ
ընդ երկայն աւուրս ուղիղ
վարդապետութեամբ։

Եւ դարձեալ Սարկաւագն դայ 'ի տեղի իւր։
Եւ քարոզեսցէ բարձր։

Գոհութիւն և փառաբանութիւն մա"։

Մինչ նոքա քարոզեն՝ քահանայն ասասցէ
զԱղօթս 'ի Ծածուկ։

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛,
եւ օրհնեա՛ զքո առաջի
կացեալ ժողովուրդս՝ եւ
զՊատարագիս մատու-
ցողս։ Եւ պարգեւեա՛
սոցա զպիտոյսն եւ զօգ-
տակարսն։

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛,
և օրհնեա՛ զուխտաւորս
և զպտղաբերիչս Եկեղե-
ցւոյ քում Սրբոյ. և որք
յիշեն զաղքատս ողորմա-
ծութեամբ։

Եւ հատո՛ նոցա զպարտս
նոցա ըստ ընդաբոյս ա-
ռատութեան քում հա-
րիւրապատիկ ասա եւ 'ի
հանդերձելումդ։

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛,
եւ գթա՛ 'ի հոգիս հան-
գուցելոցն։ Հանդո՛ զնոսա
և լուսաւորեա՛ և դասա-
ւորեա՛ ընդ սուրբս քո
յարքայութեանդ երկնից.
և արժանի արա՛ ողորմու-
թեան քում։

Յիշեա՛ Տէր եւ զհոգի
ծառայիս քոյ. (այս անուն). և
ողորմեա՛ նմա ըստ մեծի
ողորմութեան քում, եւ
հանդո՛ այցելութեամբ
'ի լոյս երեսաց քոց։

Եւ թէ կենդանի է՝
փրկեա՛ զնա յամենայն ո-
րոգայթից հոգւոյ եւ
մարմնոյ։

Յիշեա՛ Տէր և զայնոսիկ
որք յանձնեցին մեզ յիշա-
տակել յաղօթս, զկենդա-
նիս եւ զհանգուցեալս.
եւ կառավարեա՛ զկամ
հայցմանց նոցա և զմերս,

ընդ ուղղորդն և որ լինէ փրկութեամբ։

Եւ վարձատրեա՛ բոլորեցունց զանանց և զերանելի բարութիւնդ։ Եւ զտեալ զխորհուրդս մեր տաճարացո՛ յընդունակութիւն Մարմնոյ և Արեան միածնի քոյ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի. ընդ որում քեզ Հօր Ամենակալի՝ հանդերձ կենդանարար եւ ազատիչ Սուրբ Հոգւովդ. վայելէ փառք իշխանութիւն և պա՛։

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ և ասասցէ՝ ի Ձայն։

Եւ եղիցի ողորմութիւն մեծիս Աստուծոյ և փրկչիս մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ ձե՛զ ընդ ամենեսեանդ։

Դպիրն։

Ամէն և ընդ հոգւոյդ քում։

Սարկաւագն։

Ամէն և ևս խաղաղութեան զՏէր աղա՛։

Ամենայն Սրբովք զորս յիշատակեցաք ևս առա՛։

Վասն մատուցեալ սուրբ և՛։

Մինչ Սարկաւագն քարոզէ՝ Քահանայն ասասցէ՝ ի Ծածուկ։

Աստուած ճշմարտութեան և Հայր ողորմութեան՝ գոհանամք զքէն։ Որ ՝ի վերս քան զերանելի Նահապետացն, զմեր պարտաւորելոցս առաւել մեծարեցեր զքնութիւն։ Վասն զի նոցա Աստուած կոչեցար. իսկ մեզ՝ Հայր հաճեցար անուանիլ դթալով։

Եւ այժմ Տէր աղաչեմք զքեզ, զայսպիսի առ ՝ի քէն զնորոգ և զպատուական անուանադրութեանս չնորհ։ Օր ըստ օրէ պայծառացուցեալ ծաղկեցո՛ ՝ի մէջ Եկեղեցւոյ քում Սրբոյ։

՝ի Ձայն։

Եւ տուր մեզ համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր կարդալ ըզքեզ երկնաւորդ Հայր, երգել և ասել։

Եւ Դպիրքն՝ բազմատարած եղանակեսցեն։

Հայր մեր որ յերկինս ես սուրբ եղիցի անուն քոյ, եկեսո՛։

Մինչ նոքա երգեն՝ Քահանայն աղօթեսցէ՝ ի Ծածուկ։

Տէր տերանց Աստուած աստուածոց, թագաւոր յաւիտենական, արարիչ ամենայն արարածոց, Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Մի՛ տար զմեզ ՝ի փորձութիւն, այլ փրկեա՛ ՝ի չարէ և ապրեցո՛ ՝ի փորձութենէ։

՝ի Ձայն։

Օ՛ի քոյ է արքայութիւն և զօրութիւն եւ փառք յաւիտեանս ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Դպիրն։

Եւ ընդ հոգւոյդ քում։

Սարկաւագն.

Աստուծոյ երկիրպագեսցուք։

Դպիրն.

Առաջի քո Տէր։

Սարկաւագն։

Օրհնեա՛ Տէր։

Քահանայն խոնարհեսցի և ամենայն ժողովուրդն չոքիցի՝ ի ծունկս։

Եւ Քահանայն աղօթեսցէ՝ ՝ի Ծածուկ։

Որ աղքիւրդ ես կենաց և բղխումն ողորմութեան Հոգիդ Սուրբ։

Ողորմեա՛ ժողովրդեանս, որք խոնարհեալ երկիրպագանեն աստուածութեան քում։

Պահեա՛ զսոսա ամբողջս, տպաւորեա՛ յոգւոջ սոցա զձեւ մարմնոյ ցուցակի։ Առ ՝ի ժառանգութիւն և ՝ի վիճակ հանդերձելոցդ բարեաց։

՝ի Ձայն։

Քրիստոսիս Յիսուսիս տէրամբ մերով. ընդ որում քեզ Հոգւոյդ Սրբոյ եւ Հօր Ամենակալի վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ. այժմ և միշտ և յաւի՛։

Եւ Քահանայն առցէ զՍուրբ Հացն՝ ՝ի ձեռն։

Եւ Սարկաւագն ձայնեսցէ բարձր։

Պրօսխումէ։

Եւ քահանայն բարձրացուցանէ ակներև ամենայն ժողովրդեանն.

Եւ ասացէ՛ ի Զայն։

Ի Սրբութի՛ւն Սրբոց։

Դպիրն. Բարձր Զայնիւ։
Միայն Սուրբ, միայն Տէր.
Յիսուս Քրիստո՛ս.

Քահանայն։

Օրհնեալ Հայր Սուրբ
Աստուած Ճշմարիտ։

Դպիրն. Ամէն։

Քահանայն։

Օրհնեալ Որդիդ Սուրբ
Աստուած Ճշմարիտ։

Դպիրն. Ամէն։

Քահանայն։

Օրհնեալ Հոգիդ Սուրբ
Աստուած Ճշմարիտ։

Դպիրն. Ամէն։

Քահանայն։

Օրհնութիւն և փառք
Հօր և Որդւոյ և Հո-
գւոյն Սրբոյ, Այժմ և՝.

Դպիրն. Ամէն։

Հայր Սուրբ, Որդիդ Սուրբ,
Հոգիդ Սուրբ,
Օրհնութիւն Հօր և Որդւոյ
և Սրբոյ Հոգւոյն՝.

Եւ մինչ նոքա երգեն զայս, քահանայն խոնարհեսցի և աղօթեսցէ ի Ծածուկ։

Այսուհետև Տէր մեր Յիսուս Քրիստոս յերկնից ի սրբութենէ քումմէ, և յաթոռոյ փառացդ թագաւորութեան քոյ. է՛կ ի սրբել և ի կեցուցանել զմեզ։ Որ ընդ Հօր նստիս և աստ պատարագիս։

Արժանի արա՛ տալ մեզ յանարատ մարմնոյ քումմէ և ի պատուական արենէ. և ի ձեռն մեր ամենայն ժողովրդեանս։

Եւ զայս ասացեալ երկիրպագեսցէ և համբուրեսցէ զՍեղանն։

Եւ առեալ զՍուրբ Մարմինն ողջ թացցէ յանապական Արիւնն և ասացէ. ի Ծածուկ։

Տէր Աստուած մեր որ կոչեցեր զմեզ յանուն միածնի Որդւոյ քոյ Քրիստոնեայս. եւ շնորհեցեր մեզ Մկրտութիւն հոգեւոր աւազանաւն ի թողութիւն մեղաց. և արժանի արարեր զմեզ հաղորդիլ Սուրբ Մարմնոյ և Արեան միածնի քոյ։

Եւ այժմ աղաչեմք զքեզ Տէր՝ արա՛ զմեզ արժանի ընդունիլ զՍուրբ Խորհուրդս զայս մեզ ի մեզաց թողութիւն։

Եւ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ և Սուրբ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւի՛՝.

Եւ բարձրացուսցէ ակներև ժողովրդեանն և ասացէ. ի Զայն։

Ի ՍՈՒՐԲ Ի ՍՈՒՐԲ
Պատուական Մարմնոյ
և յԱրենէ Տեառն մերոյ
և փրկչին Յիսուսի Քրիս-
տոսի՝ Ճաշակեսցուք սրբ-
բութեամբ. որ իջեալ ի
յերկնից բաշխի ի միջի
մերում։

Սա՛ է Կեանք, Յոյս, Յա-
րութիւն, Քաւութիւն,
և Թողութիւն մեղաց։
Սաղմոս ասացէ՛ք Տեառն
Աստուծոյ մերում։

Սաղմոս ասացէ՛ք երկնաւոր թագաւորիս մերում անմահի, որ նստիս ի կառս քերուբէականս։

Սարկաւագն ձայնեսցէ։
Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերում՝՝.

Եւ Դպիրքն՝ եղանակեսցեն։
Քրիստոս պատարագեալ բաշխի ի մի՝՝.

Մինչ նոքա երգեն, քահանայն առցէ զՄարմինն ի ձեռն, և համբուրեսցէ արտաստուք ասելով։

Օ՜ որ օրհնութիւն, կամ զո՛ր գոհութիւն ի վերայ Հացիս եւ Բաժակիս ասասցուք։

Այլ Յիսուս զքեզ միայն օրհնեմք հանդերձ Հարբ և Ամենասուրբ Հոգւովդ այժմ և միշտ և յաւի՛՝.

Դարձեալ ասասցէ։

Խոստովանիմ և հաւատամ, զի դու ես Քրիստոս Որդի Աստուծոյ, որ բարձեր զմեզս աշխարհի։

Եւ բեկեալ արկցէ ի բաժակն Արեան ասելով։

Լրումն Հոգւոյն Սրբոյ։

Եւ ապա առեալ զմի մասն 'ի Ձեռն, ասասցէ արտասուօք և գոհութեամբ առ Հայր և Որդի, 'ի Ծածուկ։

Հայր Սուրբ որ անուանեցեր զմեզ անուանակցութեամբ միածնի քոյ։ Եւ լուսաւորեցեր մկրտութեամբ հոգեւոր աւազանին։

Աղաչեմ արա՛ ընդունիլ զՍուրբ Խորհուրդս զայս մեզ 'ի մեղաց թողութիւն. տպաւորեա՛ 'ի մեզ զՆորհս Հոգւոյդ Սրբոյ, որպէս 'ի Սուրբ Առաքեալսն ողբ ճաշակեցին և եղեն մաքրիչք ամենայն աշխարհի։

Դու արդ՝ Տէր Հայր բարերար, զհաղորդութիւնս զայս մասնաւորեա՛ ճաշակման երեկոյին աշակերտացն, բառնալով զխաւար մեղաց. մի՛ հայիր յանարժանութիւնս իմ. և մի՛ արգելցես զՆորհս Հոգւոյդ Սրբոյ։

Այլ ըստ անբաւ մարդասիրութեան քում, պարգեւեա՛ զսա՛ քաւիչ մեղաց, լուծիչ յանցանաց։ Որպէս խոստացաւ և ասաց Տէրն մեր Յիսուս Քրիստոս թէ՝ ամենայն որ ուտէ զՄարմին իմ և ըմպէ զԱրիւն իմ, կեցցէ 'ի յաւիտեան։

Աղաչեմ՝ արա՛ զսա՛ մեզ 'ի քաւութիւն, զի ողբ կերիցեն և արբցեն 'ի Սմանէ, հանցեն զօրհնութիւն և զփառս Հօր և Որդւոյդ եւ Հոգւոյդ Սրբոյ. այժմ և միշտ և՝.

Խաղաղութիւն ամենեցուն։

Գոհանամք զքէն Քրիստոս Թագաւոր, որ արժանի արարեր զանարժանս հաղորդիլ Սուրբ Մարմնոյ և Արեան քոյ։ Եւ այժմ աղաչեմ զքեզ մի՛ լիցի սա՛ ինձ 'ի դատապարտութիւն, այլ 'ի քաւութիւն եւ 'ի թողութիւն մեղաց. առողջութիւն հոգւոյ և մարմնոյ. և 'ի կատարումն ամենայն գործոց առաքինութեան։

Որպէս զի սրբեսցէ սա՛ զշունչս իմ. և զհոգի եւ զմարմին իմ։ Եւ արասցէ զիս տաճար և բնակարան Ամենասուրբ Երրորդութեանդ։ Զի ընդ սուրբս քո արժանի եղէց փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ Սուրբ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւի՛՛.

Յովհաննու Ոսկեբերանին ասացեալ Աղօթք։

Գոհանամ և մեծացուցանեմ և փառաւորեմ զքեզ Տէր Աստուած իմ, զի զիս զանարժանս արժանացուցեր յաւուր յայսմիկ հաղորդակից լինիլ աստուածային և սոսկալի Խորհրդոյ քում. անարատ Մարմնոյդ և պատուական Արեանդ. վասն այսորիկ զսոսա՛ 'ի բարեխօսութիւն ունելով, աղաչեմ յամենայն աւուրս և 'ի ժամանակս կենաց իմոց ընդ սրբութեան քոյ պահեա՛ զիս։ Որպէս զի յիշելով զբարեգործութիւնս քո եւ կենդանի եղէց ընդ քեզ։

Որ վասն մեր չարչարեցար եւ մեռար եւ յարեար. մի՛ մերձեցի Տէր իմ և Աստուած խորտակիչն, կնքելով անձին իմոյ պատուական Արեամբդ քով։ Ամենակարող մաքրեա՛ զիս սոքօք յամենայն մեռելոտի գործոց իմոց, որ միայնդ ես անմեղ։

Ամրացո՛ զկեանս իմ Տէր, յամենայն փորձութենէ. եւ ըզպատերազմողն իմ դարձո՛ յինէն յետս, պատկառեալ եւ ամաչեցեալ որչափ յառնէ 'ի վերայ իմ։ Ամրացո՛ զգնացս մտաց և լեզուի իմոց, եւ զամենայն ճանապարհս մտքիս իմոց։

Լե՛ր հանապազորդ ընդ-

իս, ըստ անսուտ խոստ-
մանց քոց, թէ որ ուտէ
զՄարմին իմ, եւ ըմպէ
զԱրիւն իմ, նա յիս բնա-
կեսցի և ես 'ի նմա։ Դու
ասացեր մարդասէր, կացո՛
զբանս աստուածային ան-
լուծանելի հրամանաց քոց։
Վասնզի դու ես Աստ-
ուած ողորմութեան, եւ
գթութեան և մարդասի-
րութեան և պարգեւիչ
ամենայն բարեաց. և քեզ
վայելէ փառք հանդերձ
Հարբդ և Ամենասուրբ
Հոգւովդ այժմ և միշտ".

Եւ ապա տեառնապրեսցէ զինքն. և խնդ-
րեսցէ 'ի Աշմարտէն Աստուծոյ զկենս պէս
հայցուածս անձին իւրոյ, և ժողովրդեան,
և աշխարհի. և Թողութիւն խնդրեսցէ
իւրոց յանցաւորացն. Թշնամեացն և ա-
տելեացն։ Եւ անդէն ահիւ և դողու-
թեամբ Աշակերտեսցէ 'ի Մարմնոյն և արբեսցէ
'ի Բաժակէն, ասելով.

Հաւատով հաւատամ
յամենասուրբ Երրոր-
դութիւնդ 'ի Հայր և Որ-
դի և 'ի Հոգիդ Սուրբ։
Հաւատով Աշակերտեմ ըզ-
սուրբ և զկենդանարար

եւ զփրկագործ Մարմինս
քո Քրիստոս Աստուած
իմ Յիսուս 'ի Թողութիւն
մեղաց իմոց։
Հաւատով ըմպեմ զսբ-
բարար և զմաքրիչ Արիւ-
նս քո Քրիստոս Աստ-
ուած իմ Յիսուս 'ի Թո-
ղութիւն մեղաց իմոց։
Մարմին քո անապական
լիցի ինձ 'ի կեանս։ Եւ
սուրբ Արիւն քո 'ի քա-
ւութիւն եւ 'ի Թողու-
թիւն մեղաց։

Եւ Սարկաւագն հաղորդեսցի. եւ յետ
հաղորդելոյն գոչէ առ ժողովուրդն
և ասէ բարձր.

Երկիւղիւ և հաւատով յառաջ մա".

Եւ Դպիրքն՝ բարձր ձայնիւ։

Աստուած մեր և Տէր մեր երեւե".

Եւ հաղորդեսցի նոր ձեռնադրեալն. բայց
ոչ 'ի բերանն, այլ յախն ոսկով զՍրբու-
թիւնն. և ամենայն արժանաւորքն հա-
ղորդեսցին. և յետ հաղորդելոյն խաչա-
կնքեսցէ զժողովուրդն Ընծայիւն
և ասասցէ.

Կեցո՛ Տէր զժողովուրդս
քո և օրհնեա՛ զժառան-
գութիւնս քո. հովուեա՛
և բարձրացո՛ զսոսա յայսմ
հետէ մինչև յաւիտեան։

Եւ Դպիրքն՝ երգեսցեն։
Լոյսք 'ի բարութեանց քոց Տէր ճաշա".

Քահանայն ասասցէ, 'ի Ծածուկ։

Զոհանամք զքէն Հայր
ամենակալ՝ որ պատրաս-
տեցեր մեզ նաւահան-
գիստ Սուրբ զԵկեղեցի՝
տաճար սրբութեան, ուր
փառաբանի անուն Սուրբ
Երրորդութեանդ։
Ալելուիայ։
Զոհանամք զքէն Քրիս-
տոս Թագաւոր՝ որ պարգ-
եւեցեր մեզ կենդանու-
թիւն կենարար Մարմնով
եւ Արեամբ քով Սրբով։
Շնորհեա՛ զքաւութիւն
և զմեծ զողորմութիւն։
Ալելուիայ։
Զոհանամք զքէն Հոգ-
ի՛դ Աշմարիտ՝ որ նորոգե-
ցեր Սուրբ զԵկեղեցի։
Անարատ պահեա՛ հաւա-
տով Երրորդութեանդ
յայսմ հետէ մինչեւ յա-
ւիտեան։
Ալելուիայ։

Սարկաւագն. Եւ ես խաղաղութեան զՏէր".
Եւ ես հաւատով ընկալեալք աստուածա".
Դպիրն. Զոհանամք զքէն Տէր որ կե".

Քահանայն ասասցէ 'ի Ծածուկ։

Զոհանամք զքէն Քրիս-
տոս Աստուած մեր՝ որ
զայսպիսի Աշակերտութեան
բարութեան շնորհեցեր մեզ
'ի սրբութիւն կենդանու-
թեան։ Սովիմբ պահեա՛
զմեզ սուրբս և անարատս,
բնակեալ զմեօք քո աստ-
ուածային խնամօքդ։
Հովուեա՛ զմեզ յանդաս-
տանի կամաց քոց սրբոց
և բարեսիրաց։ Որով ամ-
բացեալք յամենայն բան-
սարկուին ընդդիմութեց,
քում և եթ արժանի եղի-
ցուք լսել ձայնի։ Եւ քեզ
միայնոյ քաջայաղթ և Աշ-
մարիտ հովուիդ հետեւիլ։
Եւ առ 'ի քէն ընդունիլ
զպատրաստեալ տեղի յար-
քայութեանդ երկնից։
Աստուած մեր և Տէր մեր
և փրկիչ Յիսուս Քրիստոս։
Որ ես օրհնեալ ընդ Հօր և
ընդ Սուրբ Հոգւոյդ այժմ".

Խաղաղութիւն ամենեցուն։

Ընթերցումն, անհաս, երբեակ ինքնութեանդ, հաստիչ, ընդունող, և անբաժանելի, միասնական սուրբ Երրորդութեանդ, վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և".

Եւ ապա առցէ զԱւետարանն Սուրբ 'ի ձեռս իւր։ Եւ երիցս երկրպագեալ համբուրեսցէ զՍուրբն Սեղանն։ Եւ ինքնելով 'ի մէջ Եկեղեցւոյն ասասցէ զԱղօթս

'ի Ձայն։

Ո՛ր օրհնես զայնոսիկ՝ որք օրհնեն զքեզ Տէր՝ եւ սուրբ առնես զյուսացեալս 'ի քեզ։

Կեցո՛ զժողովուրդս քո՛ և օրհնեա՛ զժառանգութիւնս քո։ զպրումն Եկեղեցւոյ քո պահեա՛։

Սրբեա՛ զսոսա որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քոյ։ Դու զմեզ փառաւորեա՛ աստուածային զօրութեամբ քով։ և մի՛ թողուր ըզյուսացեալս 'ի քեզ։

Օ խաղաղութիւն պարգևեա՛ ամենայն աշխարհի։ Եկեղեցեաց, Քահանայից, Թագաւորաց Քրիստոնէից եւ զինուորեալ մանկանց նոցա, եւ ամենայն ժողովրդեանս։

Օ ի՛ ամենայն տուրբ բարիք՝ և ամենայն պարգևք կատարեալք, 'ի վերուստ են իջեալք առ 'ի քէն։ որ ես Հայր լուսոյ եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և".

Եւ Դպիրքն՝ ասասցեն երիցս։

Եղեցի անուն Տեառն օրհնեալ՝.

Եւ Քահանայն դարձցի առ ժողովուրդն և ասասցէ 'ի Ձայն։

Կատարումն օրինաց եւ Մարգարէից դու ես Քրիստոս Աստուած փրկիչ մեր։

Ո՛ր լցեր զամենայն հայրական Տնօրէնութիւնս քո։

Լի՛ց եւ զմեզ Հոգւովդ քով Սրբով։

Սարկաւագն։

Օրթի։

Քահանայն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Դպիրքն։

Եւ ընդ Հոգւոյդ քում։

Սարկաւագն։

Երկիւղածութեամբ լուարուք։

Քահանայն։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Գլ. Ա. 1։

Ի Հօրէ լուսոյ։

Ի սկզբանէ էր բանն, եւ բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր բանն։

Նա էր 'ի սկզբանէ առ Աստուած։

Ամենայն ինչ նովաւ եղեւ, եւ առանց նորա եղեւ եւ ոչ ինչ՝ որ ինչ եղեւն։

Նովաւ կեանք էր, եւ կեանքն էր լոյս մարդկան։ Եւ լոյսն 'ի խաւարի անդ լուսաւոր է, եւ խաւար նմա ոչ եղեւ հասու։

Եղեւ այր մի առաքեալ յԱստուծոյ, անուն նմա Յովհաննէս։

Սա՛ եկն 'ի վկայութիւն՝ զի վկայեսցէ վասն լուսոյն, զի ամենեքին հաւատասցեն նովաւ։ Ո՛չ էր նա լոյսն, այլ զի վկայեսցէ վասն լուսոյն։

Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ։

Յաշխարհի էր, եւ աշխարհ նովաւ եղեւ, եւ աշխարհ ըզնա ո՛չ ծանեաւ։

Յիւրսն եկն, եւ իւրքն զնա ո՛չ ընկալան։

Իսկ որք ընկալանն զնա, եւ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել՝ որոց հաւատասցեն յանուն նորա։

Որք ո՛չ յարենէ, և ո՛չ

'ի կամաց մարմնոյ, և ո՛չ 'ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան։ Եւ բանն

ՄԱՐԻՆ

եղեւ՝ և բնակեցաւ 'ի մեզ։ Եւ տեսաք զփառս նորա զփառս իբրեւ զմիածնի առ 'ի Հօրէ, լի՛ շնորհօք և ճշմարտութեամբ։

Սարկաւագն։

Սուրբ խաչիւս աղաչեցուք զՏէր զի տոկա՜".

Քահանայն։

Պահպանեա՛ զմեզ Քրիստոս Աստուած մեր՝ ընդ հովանեաւ Սուրբ և Պատուական Խաչիդ քով 'ի խաղաղութեան. փրկեա՛ յերուսելի եւ յանեղբեւոյթ թշնամւոյն։ Արժանաւորեա՛ զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ, այժմ և միշտ և՜".

Սարկաւագն։

Օրհնեցից զՏէր յամենայն ժամ՜".

Եւ Քահանայն խաչակնքեսցէ զժողովուրդն և ասասցէ բարձր։

Օրհնեալք եղերուք 'ի շնորհաց Սրբոյ Հոգւոյն. երթայք խաղաղութեամբ, և Տէր եղիցի ընդ ձեզ և ընդ ամենեսեանդ. ամէն։

Եւ Դպիրքն՝ ասասցեն.

Ի Տէր պարծեսցի անձն իմ։

Եւ ընդ Սաղմոսերն Դպրաց՝ բաշխեսցի Նշխար։ Եւ յաւարտմանն՝ Քահանայն դարձցի յԱբեւելս, և երկիրպագեսցէ առաջի Սրբոյ Սեղանոյն երիցս և ասասցէ.

Տէր Յիսուս Աստուած ողորմեա՛ ինձ։

Եւ մոեալ յաւանդատունն մերկացի 'ի զգեստուցն. և երթիցէ խաղաղութեամբ։



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՍՍՌ Արա.ՍՍՌ
ԳԻՏ. Ա. ՄՅՈՒՐԵՂՅԱՆԻ
Ա. ՄՅՈՒՍԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ

15 հատ

98

ՀՀ Ազգային գրադարան
NL0685829